

## ՆԱՏՐԻՈՐԵՏԻԿ ԶՈՐՄՈՆՆԵՐԻ ԱՆՏԱՖԻԶԻՈԼԱԳԻԱՆ ԵՎ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՐՏԱՅԻՆ ԱՆՔԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Շեկոյան Ս.Վ.

*Երևանի Ս. Զեքարցու անվան պետական բժշկական համալսարանի թերապիայի թիվ 1 ամբիոն,  
համալսարանական թիվ 1 հիվանդանոց, Երևան, Հայաստան*

Քրոնիկական սրտային անբավարարության ախտորոշման և նրա ախտաֆիզիոլոգիական մեխանիզմների բացահայտման գործում կարևոր դեր են խաղում սրտային բիոմարկերները: Նատրիուրետիկ հորմոնները՝ գերազանցապես B-տիպի նատրիուրետիկ պեպտիդը (BNP) և N-ծայրային proBNP (NTproBNP), կիրառվում են քրոնիկական սրտային անբավարարությամբ հիվանդների վիճակը գնահատման և կանխորոշման նպատակով:

Սուր սրտային անբավարարության ժամանակ նատրիուրետիկ հորմոնների մակարդակները կորելացվում են փորոքներում ճնշման և ծավալով գերբեռնվածության հետ, ինչպես նաև սրտային անբավարարության ֆունկցիոնալ դասի հետ: Սուր և քրոնիկ հևոց ունեցող հիվանդների մոտ, որոնք ունեն սրտային անբավարարության այլ նշաններ, ինչպես նաև վաղ դիաստոլիկ դիսֆունկցիա, BNP-ի և NTproBNP-ի քանակությունները համեմատական կապի մեջ են գտնվում ձախ փորոքի ձգվածության, էխոտրոստագրության մեթոդով որոշված սիստոլիկ և դիաստոլիկ ֆունկցիաների ցուցանիշների հետ:

Նատրիուրետիկ հորմոնների մակարդակը հանդիսանում է քրոնիկական սրտային անբավարարությամբ հիվանդների մահացության հզոր կանխորոշիչ գործոն՝ անկախ դիաստոլիկ ֆունկցիայի խանգարման աստիճանից:

Սրտային և այլ պատճառներով մահացության կանխորոշիչ գործոն է հանդիսանում նատրիուրետիկ հորմոնների քանակությունների որոշումը: Առանձնակի ուշադրություն պետք է դարձնել այն հիվանդներին, որոնց մոտ նատրիուրետիկ հորմոնների քանակը բարձր է, անկախ նրանց մոտ առկա սրտային պաթոլոգիայի ախտանիշներից: Սակայն պետք է հաշվի առնել, որ NT-proBNP-ի մակարդակը արյան մեջ կարող է կեղծ բարձր լինել լյարդային և երիկամային անբավարարության ժամանակ: Այդ պատճառով անհրաժեշտ է հաշվի առնել նաև կլինիկական ախտանիշները և էխոկարդիոգրաֆիկ տվյալները: Միզամուղների, անգիոտենզին փոխարկող ֆերմենտի արգելակիչների, անգիոտենզինի ընկալիչների արգելակիչների և սպիրոնոլակտոնների օգտագործման դեպքում նվազում են BNP և NT-proBNP-ի մակարդակները, որը ընթանում է հիվանդների հեմոդինամիկ ցուցանիշների բարելավմամբ և կլինիկական լավացումով:

BNP և NT-proBNP քանակությունների որոշումը արյան մեջ հնարավորություն է տալիս ծրագրել քրոնիկական սրտային անբավարարությամբ հիվանդների բուժման ալգորիթմը:

Համաձայն սուր և քրոնիկական սրտային անբավարարությամբ հիվանդների ախտորոշման և բուժման վերաբերյալ Եվրոպայի սրտաբանների միության Ուղեցույցների (2008) B-տիպի նատրիուրետիկ պեպտիդի և N-ծայրային proBNP-ի քանակությունների որոշումը անհրաժեշտ է սրտային անբավարարության ախտորոշման և վարման համար: Կանխարգելիչ բուժական քննություն կատարելիս նատրիուրետիկ հորմոնների քանակի որոշումը և էխոստագրության կիրառումը ձախ փորոքի սիստոլիկ դիսֆունկցիայի հայտնաբերման նպատակով կարևոր է բնակչության այն լայն զանգվածների համար, որոնք անցյալում տարել են սրտամկանի սուր ինֆարկտ, տառապում են շաքարային դիաբետով, ունեն թերի բուժված զարկերակային հիպերտենզիա և 70 տարեկանից բարձր են, անկախ զանգատների առկայությունից:

Ուշադրության է արժանի այն փաստը, որ ընդամենը մի քանի տարի առաջ կլինիկական պրակտիկա ներդրված նատրիուրետիկ հորմոնների քանակությունների որոշումը այժմ տեղ է գտել սրտային անբավարարությամբ հիվանդների ախտորոշման, կանխատեսման և բուժման արդյունավետության մոնիտորինգի բոլոր խոշոր սիրտ-անոթային ուղեցույցներում: